

ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ ԸԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ ՓՕԼ ԳԱԼԻՆԵԱՆ ԿԸ ՇԱՐԻ ՈՍԿԻ ՄՐՑԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ՎԱԲԵՐԱԳՐԱԿԱՆ ԼԱԲԱԳՈՅՆ ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ԸԵՂԻՆԱԿ

Յուլիս 22, 1995-ին փակուեցաւ Ֆիլատելֆիոյ Համաշխարհային Ֆիլմի Փառատօնը, որուն ընթացքին 5 ոսկի, 6 արծաթ եւ 8 պատուակալ մրցանակներ բաշխուեցան զանազան դասակարգերու մէջ: Մասնակցեցան 12 ազգեր, որոնց մէջն էին ԱՄՆ-ը Քանատան, Մեքսիքոն, Վենեզուէլան, Ֆրանսան, Իտալիան, Սպանիան, Անգլիան, Իրլանտան, Չինաստանը, Քորէան եւ Թայլանտը:

Սոյն շարժանկարը «Ուիլիլմ Սարոյեան՝ մարդը գրողը», որ յղացումն էր Ֆրեդնոյաքնակ, Քալիֆորնիայէն Փօլ Գալինեանի, ստացաւ Լէյ Ուիլլըր ոսկիէ մրցանակը՝ որպէս լաւագոյն վաւերագրականը:

Անցեալ Ապրիլ ամսուան այս շարժանկարը եւս ցուցադրուած էր Մոնթրէալի փառատօնին, ինչպէս նաեւ Հիւսթըն քաղաքի Համաշխարհային շարժանկարի փառատօնին՝ 1994-ին:


Փօլ Գալինեանի Ֆիլմը կ'ընդգրկէ Համաշխարհային Համբաւի արժանացած Հայ-ամերիկացի գրող, Բուլիճըր մրցանակի դափնեկիր Ուիլիլմ Սարոյեանի կեանքն ու գործը, անոր նկարագիրը, սէրն ու հպարտութիւնը հանդէպ իր որդեկիր երկրին՝ Ամերիկային եւ իր նախահայրերու երկրին՝ Հայաստանին: Սարոյեան կը խօսի մշակութային իր ժառանգութեան մասին, ընդգծելով որպէս գրող իր վրայ ունեցած անոր ազդեցութիւնը: Ան դրամն ու հռչակը կ'անտեսէ եւ վերջապէս կը վերադառնայ իր նախնիքներու արժատներուն եւ կը գտնէ իր վերջնական հանգիստը:

Շարժանկարը սիրոյ աշխատանք մըն է: Գալինեան խոր հիացմունք ունի Սարոյեանի հանդէպ՝ որովհետեւ ան մեծ գրող է եւ մեծ մարդասէր: Այս վաւերագրականը, Գալինեանի առաջինն է, ամբողջովին իր միջոցներով գլուխ հանուած, առանց շահագիտութեան: Եւ նպատակը՝ յաւերժացնել Սարոյեանի յիշատակը գալիք սերունդներուն առջեւ:

Հեռաձայնային խօսակցութեան ընթացքին Պրն. Գալինեան յայտնեց, թէ 2 մրցանակ եւս վաստկած է Columbus (Ohio)-ի Համաշխարհային շարժանկարի 42-րդ փառատօնին: Ուստի Հոկտ. 28-ին ինք անձնապէս պիտի ստանայ մրցանակները. առաջինը որպէս շարժանկարին որակին համար (recognition of excellence) իսկ 2-րդը պատուակալ նշում շարժանկարին պատմութեան համար:

Պրն. Գալինեանի դուստրը՝ Սիւզի, որ միասնաբար աշխատակցած է հօրը գործին, պիտի ստանայ պղինձէ նշանատախտակ մը եւս:

Յաւելեալ տեղեկութեանց համար դիմել Պրն. Փօլ Գալինեանի՝
5178 E. Huntington Ave.
Fresno, CA 93727-3920
Հեռաձայն (209)252-2102



Փօլ Գալինեան
եւ Ոսկի Մրցանակը